

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-ԻՆ ԺԱՍՈՐ 14:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան

Մասնակցում էին՝

Ա. Մովսիսյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Կ. Մինասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
Ս. Հարությունյան	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ
Ա. Տեր-Մարտիրոսյան	փորձագետ
Կ. Կարապետյան	<<Տեխնոլոգի Տրանսֆեր>> ասոցիացիա>> հասարակական կազմակերպության ղեկավար, <<Զարգացման հայկական գործակալություն>> ՓԲԸ-ի աշխատող
Մ. Աբովյան	<<Տեխնոլոգի Տրանսֆեր>> ասոցիացիա>> հասարակական կազմակերպության անդամ, <<Նյութաբանություն>> ՓԲԸ-ի տնօրեն
Գ. Հասրաթյան	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի օրգանական քիմիայի ինստիտուտի տնօրեն
Հ. Բաբայան	<<Նեյրոն>> գործարանի տնօրեն
Գ. Չուգասցյան	<<Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ>> հասարակական կազմակերպության նախագահ
Մ. Հերզոյան	<<Տեսություն և արժեքներ>> հետազոտական կենտրոն>> ՓԲԸ-ի նախագահ
Դ. Պետրոսյան	Հայաստանի պետական ագրարային համալսարանի պրո ռեկտոր-գիտական կենտրոնի տնօրեն
Ֆ. Նախչարյան	<<Գոլոս Արմենիի թերթի>> գլխավոր խմբագիր
Հ. Մկրտչյան	ՀՀ վարչապետի օգնական
Խ. Ավայան	ՀՀ վարչապետի օգնական
Վ. Նիկոյան	ՀՀ վարչապետի օգնական
Ռ. Ասատրյան	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի ինովացիոն և ներդրումային քաղաքականության բաժնի պետ

1. Փոքր և միջին քիմիայի ոլորտում գիտական հետազոտությունների արդյունքների
առևտրայնացման համակարգի զարգացման ծրագիր

(Գ. Հասարայան, Տ. Սարգսյան)

4. Որոշվեց ընդունել ի գիտություն ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի օրգանական քիմիայի ինստիտուտի տնօրեն Գ. Հասարայանի զեկույցը:

2. «Հայաստանի Հանրապետությունում փոքր քիմիայի զարգացման մասին» գիտատեխնիկական խորհրդի որոշման նախագծի քննարկում

(Ս. Հարությունյան, Տ. Սարգսյան)

2 Քննարկումներից հետո որոշվեց հանձնարարել`

1) ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար Դ. Սարգսյանին` ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության և ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ստանալ առաջարկություններ և ըստ այդմ ստեղծել աշխատանքային խումբ:

2) աշխատանքային խմբին` եռամսյա ժամկետում ներկայացնել ՀՀ-ում փոքր և միջին քիմիայի զարգացման համալիր ծրագիր:

3. Առաջիկա նիստի օրակարգի վերաբերյալ

(Ս. Հարությունյան, Տ. Սարգսյան)

4. Քննարկումներից հետո որոշվեց`

1) <<Գոլոս Արմենիի թերթի>> գլխավոր խմբագիր Ֆ. Նախշարյանին նշանակել գիտատեխնիկական խորհրդի քարտուղար:

2) հանձնարարել գիտատեխնիկական խորհրդի անդամներին` գիտատեխնիկական խորհրդի առաջիկա նիստի օրակարգի վերաբերյալ առաջարկությունները ներկայացնել գիտատեխնիկական խորհրդի քարտուղար Ֆ. Նախշարյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ